Հարցաթերթ
Աշխարհագրություն առարկայի օլիմպիադայի
մարզային փուլի – 2025-2026 ուս. տարի
/տևողությունը – 120 րոպե/
9 – րդ դասարան

1. Պնդումներից յուրաքանչյուրի համար նշել՝ ճիշտ է, թե՝ սխալ 2միավոր

ա. 2022-2024թթ. ժամանակահատվածում ՀՀ ուրբանիզացման մակարդակն ամեն տարի աճել է:

բ. 2022-2024թթ. ժամանակահատվածում ՀՀ բնակչության կյանքի ակնկալվող տևողությունն ամեն տարի աճել է:

գ. 2022-2024թթ. ժամանակահատվածում ՀՀ հետաշխատանքային բնակչության թիվն ամեն տարի աճել է:

դ. 2022-2024թթ. ժամանակահատվածում ՀՀ բնակչության բնական աճն ամեն տարի ավելացել է:

ե. Հայկական լեռնաշխարհ եզրույթը առաջինը կիրառել է Կարլ Ռիտտերը:

զ. Հայկական լեռնաշխարհը տարածվում է Եվրոպա և Ասիա աշխարհամասերում:

է. Հայկական լեռնաշխարհը եզրավորող լեռնաշղթաներից ամենաբարձր գագաթն ունի Փոքր Կովկասը:

ը. Հայկական լեռնաշխարհում անտառների ամենամեծ զանգվածը Արևելապոնտական լեռներում է:

2. Նշված եզրույթներից ո՞րն է բնորոշում հրային ներժայթուկային ապարների հսկայական զանգված, ինչպիսին կարող ենք հանդիպել Զանգեզուրում 1միավոր

ա. Մերկուրի բ. Պլուտոն գ. Նեպտուն դ. Յուպիտեր

3. Նկարագրով որոշել պետությունը 1միավոր

Ներցամաքային դիրք ունեցող և բնակչությամբ գերխոշոր քրիստոնյա այդ երկրում դեռևս 2018թ. է: Երկիրը նշանավոր է նաև տեկտոնական սալերի տարամիտման գոտում գտնվելու փաստով: Լինելով թույլ զարգացած երկիր՝ ներկայումս գրանցում է ՀՆԱ աճի տարեկան մեծ տեմպ:

4. Ելնելով տրանսպորտի տարբեր տեսակների ներկայացված ցուցանիշներից՝ լրացրեք աղյուսակի բեռնաշրջանառություն սյունը (1միավոր) և պատասխանեք հարցերին

Տրանսպորտի տեսակ	Բեռների զանգված (մլն տ)	Տեղափոխման միջին հեռավորություն (կմ)	Բեռնաշրջանառություն
Լճագետային	12	500	
Ավտոմոբիլային	120	50	
Երկաթուղային	80	200	
Խողովակաշարային	100	800	
Օդային	10	1200	

ա. Որքա՞ն է տվյալ երկրի գումարային բեռնաշրջանառությունը: 0.5միավոր

բ. Որոշել երկրի բեռնաշրջանառության կառուցվածքում ջրային, ցամաքային և օդային տրանսպորտի բաժինները՝ տոկոսներով 0.75միավոր

գ. Ինչպիսի՞ն է տվյալ երկրի ռելիեֆը՝ լեռնային, թե՝ հարթավայրային և ինչու՞ 0.25+0.5միավոր

5. Օգտագործելով աղյուսակում բերված տվյալները և փաստը, որ 1 հա հողը մելիորացիայի ենթարկելու համար անհրաժեշտ է 1մլն ՀՀ դրամ ներդրում՝ լրացրեք աղյուսակի բացակայող տվյալները (1միավոր) և պատասխանեք հարցերին:

Մարզ	Ա	Բ	Գ	Դ
Վարելահող (հազար հա)	50	150	80	40
Միջին բերքատվություն (ց/հա)	20	18	20	25
Ակնկալվող բերք (տոննա)				
Մելիորացիայի կարիք ունեցող վարելահող (հա)	5	25	20	2

ա. Որքա՞ն գումար է պահանջվում մելիորացիայի կարիք ունեցող բոլոր հողերը վերականգնելու համար (0.5միավոր)

բ. Նշեք մելիորացիայի գլխավոր տեսակը ՀՀ տարածքում (0.5միավոր)

գ. Քանի տարի կպահանջվի մելիորացիայի արդյունքում ստացվող հավելյալ բերքի շնորհիվ կատարված ներդրումների ծախսածածկման համար, եթե 1տ բերքը միջինում իրացվում է 400 հզ. ՀՀ դրամով (1միավոր)

6. Թվարկել

ա. չորս միապետական պետական կարգ ունեցող երկիր Հարավարևելյան Ասիայում 1միավոր

բ. ազոնալ բաշխում ունեցող չորս հողատեսակ ՀՀ տարածքում 1միավոր

7. Դասավորել.

Նշված երկրներն ըստ էմիգրանտների թվի աճող հաջորդականության. Հնդկաստան, Մեքսիկա, Ուկրաինա, Սիրիա 1միավոր

8. Բացատրել

ա. Ինչու՞ է խաղողագործությունն ու այգեգործությունը ՀՀ հյուսիս-արևելքում և հարավ-արևելքում ավելի նպատակահարմար, քան Արարատյան դաշտում: 1 միավոր

բ. Ինչու՞ է Ավստրալիան ամենաչոր մայրցամաքը՝ չնայած Արևելաավստրալական տաք հոսանքի և պասսատների/մուսսոնների ազդեցությանը: 1միավոր

9. Դիտարկեք տրամագիրը և պատասխանեք հարցերին



ա. Ինպե՞ս արձագանքեցին զարգացած և զարգացող երկրների պողպատի արտադրությունները Քովիդ-19 համավարակի բռնկմանը 0.5միավոր

բ. Ո՞ր երկիրն արձանագրեց պողպատի արտադրության ամենամեծ հարաբերական աճը 2019-2024թթ. ժամանակահատվածում: 0.5միավոր

գ. Բացատրեք նման կտրուկ աճը՝ ներկայացնելով երկու հիմնավոր պատճառ 1միավոր

10. Պատասխանեք ստորև բերված հարցադրումներին և հիմնավորեք

ա. Ո՞ր բնական զոնան է ամենաշատը ձևափոխվել մարդու կողմից և ինչու՞ 1միավոր

բ. ՀՀ տարածքում ո՞ր գետի վտակների հոսքի ռեժիմն է տարվա ընթացքում ավելի անկայուն՝ Կուրի, թե Արաքսի և ինչու՞ 1միավոր

11. Վերլուծեք տրամագիրը և համապատասխանեցրեք Ա,Բ,Գ,Դ-ն հետևյալ երկրներին՝ Ճապոնիա, Նիգերիա, Ավստրալիա, Սաուդյան Արաբիա (օր.՝ Ա-Ճապոնիա) 1միավոր



Առարկայական հանձնաժողովի նախագահ՝ Վ. Ասատրյան